

Մակրոնի Ֆրանսիան՝ գոլիզմի վեկտորով ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 15.04.2024թ.

2023 թ. վերջից ուկրաինական հակամարտության նկատմամբ Ֆրանսիայի քաղաքականությունը զգալիորեն ակտիվացել է: Զուգահեռաբար աշխուժացել է Փարիզի դիվանագիտությունը հարավկովկասյան տարածաշրջանային ուղղությամբ: Ընդ որում, երկու դեպքում էլ նկատելի էր նշված տարածաշրջանների խնդիրների նկատմամբ Փարիզի հրաժարումը Հինգերորդ Հանրապետության նախկին մոտեցումներից:

Եթե դեռևս 2023 թ. հունվարին նախագահ է. Մակրոնը արևմտյան սակավաթիվ այն առաջնորդներից էր, ով պնդում էր Մոսկվայի հետ երկխոսության և նրա շահերը ուկրաինական հարցի համատեքստում հաշվի առնելու անհրաժեշտության մասին, ապա ներկայումս Փարիզի ուղեգիծը կտրականապես հակասում է իր նախկին դիրքորոշմանը: Մակրոնը փաստացի դարձավ Արևմտյան կոալիցիայի առաջին առաջնորդը, ով բացահայտ հայտարարեց, որ իր երկիրը պատրաստ է ուղղակիորեն մասնակցելու ուկրաինական պատերազմին: Այս խոսքերը հաստատվում են Ֆրանսիական ստորաբաժանումների՝ Ռումինիա և, գործնականում, հենց Ուկրաինա ինտենսիվ տեղափոխման մասին տվյալներով: Այլ հարց է, թե որո՞նք են լինելու նրանց խնդիրները՝ պաշտպանել Օդեսայի նավահանգստային ենթակառուցվածքները, դիվերսիոն գործողություններ իրականացնել Մոլդովայում ռուսական խաղաղապահ զորակազմի դեմ, թե՛ կատարել արգելափակիչ ջոկատների գործառույթներ, ինչի մասին անընդհատ խոսում են ռուսական լրատվամիջոցները: Անկախ իրենց նշանակությունից՝ Ուկրաինայում գտնվող ֆրանսիական զորքերը, պատերազմին ՆԱՏՕ-ի անդամ-երկրի ուղիղ և անմիջական միջամտության նախադեպ են ստեղծում: Բացի այդ, այս փուլում հենց ՖՀ-ն է հետևողականորեն լրբբինգ անում եվրոպական կառույցներում Կիևին ռազմական և ֆինանսական օգնության մեծացման խոսույթի համար, որպեսզի անհրաժեշտ պայմաններ ստեղծի Զելենսկու հայտարարած «երկրորդ հակահարձակողական արշավի» համար:

Հարավկովկասյան ուղու վրա Փարիզի նախկին մոտեցումների բեկումն, առաջին հերթին, նկատելի է տարածաշրջանի երկրների հետ Հինգերորդ Հանրապետության հարաբերությունների անհամաչափության մեջ: Եթե մինչև վերջերս Ֆրանսիան հետևում էր հարավկովկասյան սուբյեկտների հետ հավասարակշռված համագործակցության քաղաքականությանը, ապա այժմ՝ այդ մոտեցումը լուրջ փոխակերպման է ենթարկվում: Օբյեկտիվ պատմական հանգամանքներից ելնելով՝ Ֆրանսիայի և Հայաստանի միջև առանձնահատուկ հարաբերությունները և Երևանի անդամակցությունը Ֆրանկոֆոնիայի ակումբին չխանգարեցին Փարիզին երեք տասնամյակ շարունակ լավ հարաբերություններ պահպանել ինչպես Վրաստանի, այնպես էլ՝ Ադրբեջանի հետ:

Վերջինի պարագայում փոխգործակցության և սերտ կապերի հիմնական հարթակը տնտեսական ոլորտն էր և, հատկապես, ֆրանսիական խոշոր կապիտալի մասնակցությունը ԱդրՀ-ի էներգետիկական և էներգահումքային կոնսորցիումներում: Ֆրանսիական *Total* էներգետիկ հսկայի զուտ մասնակցությունը ադրբեջանական նավթի և գազի հետախուզման, արդյունահանման և արտահանման նախագծերին ապահովել է փոխադարձ հավատարմության անհրաժեշտ պաշար, որը Բաքվի համար բավական է չեզոքացնելու «ռիսկերը» Փարիզի և Երևանի միջև կայուն ջերմացող հարաբերություններից: Ադրբեջանն իր հերթին Ֆրանսիայում տնտեսական լոբբինգի միջոցով հաջողությամբ չեզոքացրեց ՖՀ-ի և ՀՀ-ի հարաբերությունները ավելի նշանակալի բանի փոխակերպելու վտանգները, քան պարզապես մշակութային-պատմական մտերմությունը և հասարակությունների ու ժողովուրդների փոխադարձ համակրանքն էին: Բացի այդ, եվրոպական կառույցների և, առհասարակ, Արևմուտքի միջոցով Փարիզի վրա այս համատեքստում ազդելու համար Բաքուն ակտիվորեն կիրառեց լայն գործիքակազմ՝ բավականին սթափ գնահատելով Ֆրանսիայի կարողությունների սահմանափակ լինելը՝ խաթարելու Հարավային Կովկասի խնդիրների վերաբերյալ ԱՄՆ-ի և Բրյուսելի ընդհանուր ռազմավարությունը:

Եվ, այնուամենայնիվ, այս պահին որոշակի առումով այս խաթարումը արդեն իսկ նկատվում է: Այլ հարց է, թե Փարիզը որքանո՞վ է Երևանի և Բաքվի հետ հարաբերությունների անհավասարակշռության հարցում առաջնորդվում սեփական նախաձեռնությամբ և, արդյո՞ք, Հայաստանի հետ ռազմաքաղաքական արմատական մերձեցման փորձը ՆԱՏՕ-ում գերիշխող անգլո-սաքսոնների՝ ՌԴ-ին Հարավային Կովկասից դուրս մղելու խաղի միայն մի դրվագ չէ: Ի վերջո, նույնիսկ աշխարհաքաղաքական գործընթացների այսպիսի հաշվարկված տրամաբանությունը՝ Փարիզը պետք է պատրաստ լինի նրան, որ կփչացնի հարաբերությունները թե՛ Բաքվի, թե՛ Անկարայի հետ: Դժվար թե ֆրանսիական իշխանությունները սա չհասկանան: Եվ, այնուամենայնիվ, Ֆրանսիան պատրաստ է խաղալ իր ստանձնած դերը: Սա կարող է նշանակել, որ Մակրոնի և նրա կառավարության ակնկալիքները Հայաստանին աջակցելու քաղաքականությունից ավելի էական են, քան Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերություններում քաղաքական և դիվանագիտական ճգնաժամի նոր ալիքի վնասները:

Ներկայումս այս ճգնաժամի նշաններն արդեն դրսևորվում են կողմերի ագրեսիվ հռետորաբանությամբ, դիվանագիտական սկանդալներում՝ դեսպանատների աշխատակիցների երկուստեք արտաքսմամբ և «լրտեսական պատմություններով»: Միևնույն ժամանակ, իրադարձությունները վկայում են այն մասին, որ բիզնես շահերի մեծ կարևորությամբ պայմանավորված՝ Փարիզի և Բաքվի միջև հարաբերություններում

Հինգերորդ Հանրապետությանը ՀՀ-ի հետ կապված որոշ նոր ծրագրեր իրականացնելուց:

Այսպիսով, ակնհայտ է Փարիզի սկզբունքային ակտիվացումը նշված երկու ոլորտներում, ինչպես նաև՝ գործնականում համաժամանակյա այդ աշխարհաքաղաքական ձեռնարկումների փոխկապվածությունը: Նրանց նպատակները հասկանալու համար պետք է դիմենք Ֆրանսիայի համար մեկ այլ կարևոր աշխարհաքաղաքական իրադարձության, որի պատմական նշանակությունը մնաց Մերձավոր Արևելքի և Ուկրաինայի ներկայիս իրադարձությունների ստվերում:

Խոսքը, այսպես կոչված, «*Francafrik*» նախագծի վերջնական և անդառնալի լուծարման մասին է, որի վերջին արարը ֆրանսիական զորախմբի դուրսբերումն էր Նիգերից 2023 թ. աշնանը՝ այնտեղ տեղի ունեցած հեղաշրջման արդյունքում: Նույնիսկ մինչ այդ, 4 տարիների ընթացքում 7 ռազմական հեղաշրջում է տեղի ունեցել Ֆրանսիայի Հանրապետության ժառանգությունը համարվող Սահելի շրջանում և Արևմտյան Աֆրիկայում՝ տապալելով Փարիզի հետ սերտ համագործակցող վարչակարգերը: Այսպիսով, Աֆրիկայում Ֆրանսիայի հետգաղութային հովանավորության մնացորդները, որոնց ճարտարապետությունը դրվել էր անցյալ դարի 60-ական թվականներին Դը Գոլի խորհրդական, հանրապետության «գորշ կարդինալ» ժակ Ֆոկարտի կողմից, վերջնականապես հեռացվեցին Փարիզի աշխարհաքաղաքական օրակարգից:

Ընդհանուր առմամբ, Ֆրանսիան երկար ժամանակ էր գնում նման հանգուցալուծման: Եվ նման ելքի պատճառները հենց ֆրանսիական նեոգաղութատիրության գաղափարի՝ որպես «*նախկին կայսրության ծայրամասերը կործանումից փրկելու համար անհրաժեշտ մարդասիրական հայեցակարգի*» արժեզրկումն է: Ինչպես նաև ֆրանսիական հասարակության անտարբերությունը, որը չի ցանկանում աֆրիկյան հովանավորությունը դիտարկել ֆրանսիական ազգի մեծապետական ժառանգության համատեքստում: Մյուս կողմից, անխուսափելի էր դարձել Սահելի և ամբողջությամբ Արևմտյան Աֆրիկայի կորուստը՝ հաշվի առնելով Փարիզի կողմից «ֆրանկո-աֆրիկյան» ռեժիմներին և բյուրոկրատիաներին «սնուցելու» և սատարելու կարծրացած մեթոդները, ինչպես նաև վերջին տասնամյակում Պեկինի կողմից Աֆրիկա «խուժող» չինական կապիտալի հարձակումը զսպելու անկարողությունը:

«Ֆրանսիական Աֆրիկան» չինացիներին, բրիտանացիներին և ռուսներին հանձնելու մեջ Մակրոնի մեղավորության մասին խոսույթն այժմ շատ է տարածված Հինգերորդ Հանրապետության քաղաքական կյանքում, հատկապես՝ աջ արմատականների շրջանում: Մինչդեռ, կարծես, ՖՀ ներկայիս ղեկավարի մեղքը միայն այն է, որ հենց նրա նախագահության օրոք տեղի ունեցավ սև մայրցամաքում ֆրանսիական ազդեցության ապակտիվացման անդառնալի գործընթացի ավարտը: Փարիզի հեղինակության արժեզրկման գործընթացը Սահելում ուժային միջամտությամբ կասեցնելու փորձ

կատարած Ն. Սարկոզիի և Ֆ. Օլանդիի աֆրիկյան քաղաքականությունն իրականում միայն արագացրեց Ֆոկարտի նեոգաղութային ճարտարապետության անխուսափելի փլուզումը, որի ավերակներով ո՛չ Մակրոնը, և ո՛չ էլ որևէ այլ առաջնորդ չէին կարողանա կառուցել թեկուզ «*Francafrik*»-ի հեռավոր նմանակը: Առաջինը՝ Սարկոզին, գլխավորեց այն կոալիցիան, որը կործանեց Քադաֆիի Լիբիան և ճանապարհ բացեց Փարիզի կողմից «թագադրված» Սահելի բռնատիրական վարչակարգերի դեմ պայքարի գաղափարի իսլամացման համար: Երկրորդը՝ Օլանդը, Կոտ դ'Իվուարում և Մալիում միջամտության գործողությունների միջոցով սրեց հակամարտությունը Սահելի սևամորթ բնակիչների և արաբալեզու ցեղերի հատվածների միջև՝ արագացնելով ֆրանսիական Աֆրիկայի ինքնիշխան սուբյեկտների մասնատումն ու փաստացի փլուզումը:

Նման պայմաններում Մակրոնի կառավարությանը մնում էր միայն ընդունել Ֆրանսիայի անկարողությունը Սահելի հպատակների նկատմամբ երկարաժամկետ «խնամակալության» հարցում և կատարել Նիգերի խունտիստների վերջնագիրը՝ պահանջով, որ դադարեցնի իր ռազմական ներկայությունը այդ երկրում:

Այսպիսով, աֆրիկյան ծախողումն ամբողջությամբ ընկավ Մակրոնի ուսերին, բայց, մեծ հաշվով, նրա քաղաքական հեղինակությունը փրկեց այն փաստը, որ հիմնականում Եվրոպան ավիրած ուկրաինական պատերազմի շնորհիվ ֆրանսիական հասարակությունը դարձավ ավելի անտարբեր երկրի արտաքին գործունեության նկատմամբ: Ֆրանսիական Աֆրիկայի կորուստը, իհարկե, ծանր հարված է Փարիզի համար, որը ոչ միայն կորցրեց էժան պաշարների բազա և 300 միլիոնանոց շուկա, այլ նաև հարմար հարթակ՝ «գորանոցների պահպանման» և սեփական ռազմական կազմավորումների փորձարկման համար, որոնք կոչված են գործի դրվելու նրա անմիջական սահմաններից դուրս՝ հանուն Հանրապետության շահերի: «Ֆրանսիական օտարերկրյա լեգեոնը» համաշխարհային պրակտիկայում ԶՈՒ-ի եզակի ձևաչափ է, որն իր ստեղծման օրվանից՝ 1831 թվականից ի վեր, Փարիզի համար հաջողությամբ առաջադրանքներ է իրականացրել՝ գաղութացնելով տարածքներ Աֆրիկայում, Հյուսիսային Ամերիկայում, Հարավարևելյան Ասիայում, Ֆրանսիայում, ֆրանս-պրուսական պատերազմների ժամանակ, ինչպես նաև՝ երկու համաշխարհային պատերազմների ընթացքում հսկայական դեր խաղացել Չորրորդ Հանրապետության համար, այժմ հայտնվել է «անիվների վրա գտնվող բանակի» կարգավիճակում: Ավանդաբար, Լեգեոնը չի կարող երկարաժամկետ հիմքունքներով տեղակայվել Ֆրանսիայի անմիջական տարածքում: Դա չի թույլատրվում նաև՝ ելնելով դրա կազմաձևման և իրավական կարգավիճակի առանձնահատկություններից: Ինչ-որ բան պետք է անել խնդրո առարկա զորամիավորման հետ, և այդ խնդիրը Մակրոնի համար պակաս կարևոր չէ, քան Աֆրիկայում ֆրանսիական կապիտալի վերակազմավորման

խնդիրը, Ֆրանսիայի արտաքին քաղաքականության դոկտրինի վերանայումը և երկրի իմիջը աշխարհում վերականգնելու քայլերի ծրագիրը:

Այս առումով հարկ է նշել, որ Փարիզի միջազգային հակառակորդների ծաղրական և, հաճախ, հեզնական արտահայտությունները՝ կապված «Սահելի խայտառակության» և դրա ֆոնին՝ Մակրոնի «նապոլեոնյան» հակումների հետ, մեղմ ասած, բոլորովին տեղին չեն: Ֆրանսիացի առաջնորդի գործողությունները պայմանավորված են Հանրապետության «աֆրիկյան ժառանգությանը» վերաբերող գործերն ավարտին հասցնելու և գլոբալ աֆրիկյան ձախողման մեջ Ֆրանսիայի իմիջի, նյութական և քաղաքական կորուստների փոխհատուցման օպտիմալ լուծումներ փնտրելու անհրաժեշտությամբ: Այս առումով, խնդրահարույց տարածաշրջաններում Ֆրանսիայի ներգրավվածության ակտիվացումը կապված է ինչպես ներքին հավասարակշռության, այնպես էլ՝ արտաքին կորդինատային համակարգում հավասարակշռության պահպանման անհրաժեշտության հետ, որտեղ Հինգերորդ Հանրապետությունը կանգնած է նոր գլոբալ աշխարհակարգի նախաշեմին իր նշանակալի ձայնը կորցնելու վտանգի առջև:

Մակրոնի «փափուկ» վարքագծի փոխակերպումը և նրա ռազմասիրության հանկարծակի պոռթկումը դժվար թե դիտարկվի ֆրանսիացի առաջնորդի անձնական հասարակ նկրտումների լույսի ներքո, ով հանկարծ Նապոլեոնի բարդույթով «հիվանդացավ»: Ամենայն հավանականությամբ, սա փորձ է՝ թելադրված մեծապետականության (ազգային) գաղափարը կորցնելու սպառնալիքով դիմելու գոլիզմի նման ինչ-որ երևույթի: Մի հայեցակարգային գծի, որում երկրի ինքնուրույն ընտրությունն ու ուղին ոչ մի կերպ և ոչ մի պարագայում կախվածության մեջ չեն դրվում աշխարհաքաղաքական իրադրությունից և ինչպես դաշնակիցների, այնպես էլ՝ թշնամիների ճնշումից: Առաջին հայացքից Մակրոնը և նրա հետևում կանգնած վերնախավերը դիմում են Ռուսաստանի նկատմամբ իրենց դիրքերի արմատականացմանը, բայց իրականում նման առավելապաշտական դիրքորոշման հիմնական նպատակը Փարիզի պահանջն է ՆԱՏՕ-ի իր դաշնակիցներից՝ ավելի լայն հարթակ ստեղծելու համար Ֆրանսիայի աշխարհաքաղաքական հավակնությունների իրականացման և որոշակի տարածաշրջաններում ամրակայման համար, որոնք պետք է փոխհատուցեն «աֆրիկյան կորուստը»: Իրոք, այս կորուստն իրականում հնարավոր դարձավ մեծապես Փարիզի ֆրանսիական հայրենակալվածք բրիտանական կապիտալի ավերիչ ներթափանցման շնորհիվ, ինչպես նաև թուլացնելով ԱՄՆ-ի աջակցությունը Փարիզին՝ չեզոքացնելու Չինաստանի ընդլայնվող ազդեցությունը Աֆրիկյան մայրցամաքում: Եվ, վերջապես, Վաշինգտոնի կողմից «իսլամական տակաոֆ» հրկիզման արդյունքում, որի քաղաքականությանը համահունչ Սարկոզիի և Օլանդի կառավարությունները գործեցին կուրորեն:

